Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2025 թվականի աշխատանքային ծրագրով 4-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի աշխատանքային ծրագրով 4-րդ եռամսյակի ընթացքում նախատեսվում է՝

- Հաստատել էլեկտրակայանների պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունները՝ համաձայն էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների:
- Վերանայել Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի սակագնային կարգավորման ենթակա խոշոր արտադրող կայանների և ծառայություններ մատուցող ընկերությունների սակագները:
- Վերանայել սպառողի էներգատեղակայանքներով էլեկտրական էներգիան ենթասպառողների կամ բաշխողի այլ ցանցերի սնման համար փոխանցելու կարգով ամրագրված դրամային մեծությունները:
- Հաստատել սակագնային կարգավորման ենթակա արտադրողների կողմից ուղիղ պայմանագրերի շուկայի կարգավորվող բաղադրիչում պարտադիր վաճառքի ենթակա էլեկտրական էներգիայի չափաքանակները՝ համաձայն էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների:
- Ուսումնասիրել և ամփոփել էլեկտրաէներգետիկական շուկայի ցուցանիշները:
- Լրամշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 2-ի N295-Ն որոշմամբ հաստատված ջրային ոլորտում գործունեության լիցենզավորման կարգը:

- Վերանայել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագները:
- Իրականացնել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների հաշվարկներում ներառվող մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների մոնիթորինգ:
- Լրամշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի սեպտեմբերի 3-ի N471-Ն որոշմամբ հաստատված՝ տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման սակագների և պայմանների հրապարակման կարգը:
- Իրականացնել հանրային կազմակերպությունների 2024 և 2025 թվականների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգ:
- Հաստատել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2026 թվականի անվանական կազմի և կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը:
- Հրապարակել դատական գործերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:
- Մշակել և հաստատել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2026 թվականի աշխատանքային ծրագիրը:

Եռամսյակային արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել՝

- սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,

- էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները,
- նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական, գազամատակարարման ցանցերին, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացումների եռամսյակային ցուցանիշները: